ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 փետրվարի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

20
(3229)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Երեկ ՀՀ քննչական կոմիտեն հաղորդագրություն տարածեց այն մասին, որ 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի առնչությամբ նոր քրեական հետապնդում է հարուցվել նախկին կարկառուն դեմքերից մեկի՝ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ Հովհաննես Թամամյանի նկատմամբ:

Քննչականի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող վարույթի շրջանակում ձեռք բերված փաստական տվյալներով՝ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ Հ.Թ.-ն 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան առանց հիմնավորման հանձնարարել է ոստիկանության ծառայողներին բռնություն գործադրել Երեւանի Ազատության հրապարակում ընթացող հանրահավաքի մասնակից Է.Ա.-ի նկատմամբ եւ նրան տեղափոխել ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն:

Ըստ հաղորդագրության՝ ոստիկանության ծառայողները, կատարելով ակնհայտորեն իրենց լիազորությունների շրջանակից դուրս գործողություն, ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել Է.Ա.-ին՝ պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս:

Ձեռք բերված տվյալների հիման վրա Հ.Թ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 2003 թվականի քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելուն դրդելը): 2026 թվականի փետրվարի 25-ին նա ձերբակալվել է՝ դատարան ներկայացնելու նպատակով: Նախաքննությունը շարունակվում է: ⇨ էջ 4

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Կառավարությունը նոր որոշում է ընդունել՝ սահմանելով հայտարարագրման ոչ ենթակա նվազեցվող եկամուտների տեսակներ ու չեմեր, մասնավորապես հայտարարագրման ենթակա չեն լինի մինչեւ 1 մլն դրամի միանվագ փոխանցումները: Որոշումը հավանության արժանացավ Կառավարության փետրվարի 26-ի նիստում: «Այս նախագծով առաջարկվում է սահմանել, որ հայտարարագրման ենթակա չեն ստացվող վարկերի գումարները՝ առանց գումարային սահմանափակման, ընտանիքի անդամ չհամարվող ֆիզիկական անձանցից մինչեւ 1 մլն դրամը միանվագ ստացվող փոխառությունների գումարները, ոչ առեւտրային կազմակերպություններից միանվագ մինչեւ 1 մլն դրամը ներառյալ անհատույց ստացվող ակտիվները, ժառանգության եւ նվիրատվության կարգով ընտանիքի անդամ չհամարվող ֆիզիկական անձանցից միանվագ՝ մինչեւ 1 մլն դրամ արժեքով ստացվող գույքը, դրամական միջոցները եւ այլն»,-ասաց ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

⇨ էջ 3

ՀՀ առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը, որը համացանցում հրապարակել է ռիլ՝ անդրադառնալով առողջապահության համընդհանուր ապահովագրության թեմային, դժգոհություն է առաջացրել թե՛ մասնագիտական շրջանակներում, թե՛ հենց նախարարությունում: «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ տեսանյութում փոխնախարարի անբռնազբոս ծիծաղն ու ձեւակերպումները մի շարք բժիշկների կողմից ընկալվել են որպես ծաղրական վերաբերմունք համակարգի խնդիրների նկատմամբ: Աղբյուրները պնդում են, որ հրապարակումից հետո առողջապահական համայնքում քննադատական արձագանքներ են հնչել, ինչի հետեւանքով ռիլը կարճ ժամանակ անց հեռացվել է: Իհարկե, մենք ունենք տեսանյութը: Նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցում են, որ ստեղծված իրավիճակը նաեւ ներքին քննարկման առիթ է դարձել: Մեր աղբյուրների պնդմամբ՝ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը դժգոհել է հրապարակումից, եւ հենց նախարարի մակարդակով է հորդորվել հեռացնել տեսանյութը: Պաշտոնական հաստատում այս տեղեկության վերաբերյալ առայժմ չկա:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ օտարերկրացի 29-ամյա մի տղամարդ «Տելեգրամ» հավելվածի միջոցով ապօրինի ձեռք է բերում եւ իրացնում թմրամիջոցներ: Քրեական ոստիկանները փետրվարի 20-ին իրացրին տեղեկությունը: Ժամը 11:55-ին Երեւանի Թամանցիների փողոցին հարակից տարածքում նրանք ձերբակալեցին տղամարդուն եւ տեղափոխեցին Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեց սեւ ժապավենով 23 փաթեթ՝ ընդհանուր ավելի քան 56 գրամ քաշով: Ըստ տղամարդու՝ փաթեթներում մեթամֆետամին էր, որը ձեռք էր բերել «Տելեգրամ» հավելվածի միջոցով՝ տարբեր վայրերում տեղադրելով իրացնելու նպատակով: Նախաձեռնվեց քրեական վարույթ, որի շրջանակում կատարված քննչական գործողության արդյունքում տարբեր թաքստոցներում հայտնաբերվեց օտարերկրացու տեղադրած եւս 33 փաթեթ: Հայտնաբերվածի ընդհանուր քաշն ավելի քան 87 գրամ էր: Տղամարդը կալանավորվել է: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՔՈՂԱՐԿՎԱԾ ԸՆՏՐԱԿԱՇԱՐՔ

ԴԱԿ-Ը «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՀԵՏ

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունն օրերս հայտնել է, որ ընդունել է գործարար Գագիկ Ծառուկյանի «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը եւ նշել, որ համապետական ընտրություններին մասնակցելու են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ: ArmLur.am-ի հետ զրույցում ԴԱԿ նախագահ Սուրեն Սուրենյանցը համագործակցությունից մանրամասներ է հայտնում:

-Պարոն Սուրենյանց, Ձեր կուսակցությունը ընդունել է Գագիկ Ծառուկյանի «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը, եւ համապետական ընտրություններին մասնակցելու է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ. ի՞նչ է իրենից ենթադրում այս համագործակցությունը:

-Քաղաքական դաշտում երեւի մեր կուսակցության որոշումը ամենականխատեսելի եւ սպասելիներից մեկն էր, բաց տեքստով վերջին 5 տարիներին հայտարարել ենք, որ «Դեմոկրատական այլընտրանք» եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները ինստիտուցիոնալ համագործակցության մեջ են: Քաղաքական օրակարգում «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը ես համարում եմ ամենագրավիչ եւ զարգացող ծրագիրը, որովհետեւ իր կառուցվածքը շատ կարեւոր է, ինքը ձեւավորվում է ոչ թե վերեւից ներքեւ, այլ ներքեւից վերեւ սկզբունքով, այսինքն՝ նախագծին միավորվող բոլոր ուժերը կամ անհատները իրենք են ձեւավորում համապարփակ այդ ծրագիրը իրենց առաջարկներով: Իմաստը այն է, որ միացող սուբյեկտը առաջինը ծրագրային ներդաշնակությամբ պետք է գա, իսկ հետո ակնկալի արդեն իր տեղը համամասնական ցուցակում կամ թիմում կադրային առումով: Եւ արդեն Գագիկ Ծառուկյանին կոնսոլիդացնող գործոնը, այս ամենը հաշվի առնելով՝ «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը պաշտոնապես կայացրեց որոշումը: Ասեմ, որ այդ համագումարին մասնակցել է 650 պատվիրակ:

-Ընդդիմադիր քաղաքական ուժերի հիմնական խնդիրը իշխանափոխությունն է, ինչո՞ւ այս խնդրի շուրջ միավորում չկա: Ինչո՞ւ չկա մեկ միասնական ցուցակ:

-Ես ունեմ 33 տարվա քաղաքական գործունեության փորձ, մեկ միասնական ընդդիմության թեզը այն հաշվարկով, որ բոլորս միավորվենք մի ընտրական թիմում՝ դա ուտոպիա է, դա չաշխատող մի բան է: Նման հաջողված փորձ անգամ աշխարհում չկա:

Ուտոպիա է, ոչ թե վատն են կամ չար են մեր ընդդիմադիր ուժերը, կամ չեն կարողանում կոնսեսուսի գալ, այլ ընդդիմությունը, ի տարբերություն իշխանության, վերտիկալ չունի, գործադիր իշխանության ղեկավարող, որ ցուցում տան՝ ընդդիմադիր բոլոր սեգմենտները իմի գան:

-Արդեն հայտնի դարձավ այն, որ ապրիլի 1-ից կենսաթոշակները 10000 դրամով բարձրացվելու են, ինչո՞ւ կառավարությունը գնաց այդ քայլին:

-Ակնհայտորեն գործ ունենք նախընտրական լոգիկայի հետ: Ես ուրախ եմ, որ կենսաթոշակը բարձրացրել են, ասեմ ավելին՝ դեռ քիչ են բարձրացրել, եթե պետական ավելորդ ծախսերը կրճատեն, վստահաբար շատ ավելի կարող է այդ գումարը կազմել, բայց հետաքրքիր է՝ ինչը փոխվեց այս մարդկանց ուղեղներում, երեւի այն, որ գիտակցեցին՝ քողարկված ընտրակաշառքին նման բաներ պետք է անեն, որ կարողանան ձայներ հավաքել, որովհետեւ կարելի է ասել ողբերգականորեն գահավիժում է իշխանության վարկանիշը, եւ տեսնում են, որ բավականին ազդեցիկ մրցակիցներ ունեն, եւ հիմա ընտրակաշառք հիշեցնող բաներ կտեսնենք: Ուղղակի ես մեր կենսաթոշակառուներին ասեմ, որ մենք շատ ուրախ ենք նրանց համար, թեկուզ մեզ բոլորիս հետ մրցակցելու հնարավորությունները ավելացնելու համար բարձրացրել են, բայց ո՞ւր էին այդ բարձրացումները վերջին տարիներին:

-Կցանկանայի՝ անդրադառնայիք խաղաղության այս գործընթացին: Իշխանության համար, կարելի է ասել, հիմնական դրոշակը խաղաղությունն է, տեսնո՞ւմ եք քայլեր, որ մինչեւ ընտրություններ խաղաղության նախաստորագրումից քայլ կարվի:

-Ո՛չ, ես չեմ տեսնում, քանի որ Ալիեւը շատ հստակ նախապայմանը ձեւակերպել է: Հավատացե՛ք, եթե նույնիսկ Սահմանադրությունը փոխվի, հետո ասելու են՝ 300 հազար ադրբեջանցի պետք է գա Հայաստան, իսկ հետո ասելու են՝ էլի մի նի միջանցքներ պետք է տաք... այն մոդելը, որը պատկերացնում է Նիկոլ Փաշինյանը, իրականում առհասարակ կապ չունի խաղաղության հետ: Իսկ Ալիեւին պետք է մաքսիմումը Հայաստանից կորզել, դրա համար Հայաստանում պետք է գա այնպիսի իշխանություն, որ կարողանա մոդելը փոխել:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Առկի Յուտակային:

Նախագահը ողջունել է դեսպանին եւ շնորհավորել Ճապոնիայի Ազգային տոնի՝ կայսեր ծննդյան օրվա առթիվ՝ մաղթելով Ճապոնիայի ժողովրդին բարգավաճում եւ հաջողություններ:

«Շնորհավորում եմ Ձեզ եւ բարեկամ Ճապոնիայի ժողովրդին՝ Նորին մեծության Ճապոնիայի կայսեր տարեդարձի կապակցությամբ: Մեր երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո դրանք զարգացել են երկու հենասյուների վրա՝ ժողովրդավարություն եւ մարդու իրավունքներ: Մենք այն ժամանակ՝ որպես նոր ստեղծվող երկիր, եւ արդեն նաեւ որպես ժողովրդավարական երկիր՝ մեր ճապոնացի գործընկերներից սովորել ենք եւ շարունակելու ենք սովորել, թե ինչպես շարունակել ապավինել ժողովրդավարական արժեքներին, զարգացնել տնտեսությունը, բարձրացնել երկրի քաղաքացիների կենսամակարդակը»,- նշել է նախագահը:

Դեսպան Յուտական իր շնորհակալությունն է հայտնել ընդունելության եւ բարեմաղթանքների համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ գործընկերության հետագա զարգացման ուղիները, ինչպես նաեւ համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել քաղաքական, տնտեսական, բարձր տեխնոլոգիաների ոլորտներում փոխգործակցության ակտիվացմանը: Կարեւորվել է նաեւ Ճապոնիայի կողմից ցուցաբերված հումանիտար օգնությունը, շեշտվել է աղետների կանխարգելման եւ կառավարման ուղղությամբ համագործակցության ընդլայնման կարեւորությունը: Կողմերը կարեւորել են գյուղատնտեսության ոլորտում համատեղ նախաձեռնությունների իրականացումը, ինչպես նաեւ տարբեր ուղղություններով երկկողմ հարաբերությունների սերտացման եւ նոր ծրագրերի խթանումը:

Երկու կողմերն էլ ընդգծել են բարձր մակարդակի քաղաքական երկխոսության, փոխայցելությունների եւ խորհրդարանական դիվանագիտության զարգացման կարեւորությունը: Բացի այդ, կողմերը փոխանակել են մտքեր տարածաշրջանային խաղաղության եւ ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման վերաբերյալ:

Նախագահ Խաչատուրյանը շնորհակալություն է հայտնել Ճապոնիայի կառավարությանը եւ իշխանություններին՝ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում շարունակական աջակցության համար:

ՉԻ ԲՈՂՈՔԱՐԿԻ

Ռուբեն Վարդանյանը որոշել է դատավճիռը չբողոքարկել: Այս որոշումը չի նշանակում համաձայնություն դատավճռի հետ եւ չի նշանակում հրաժարում պաշտպանությունից: Սա գիտակցաբար հրաժարում է լեգիտիմացնելու գործընթացը, որն ի սկզբանե կապ չուներ արդարադատության հետ: Ռուբեն Վարդանյանի նկատմամբ կայացված դատավճռից հետո հայտարարել է նրա ընտանիքը:

«Լսումների ընթացքում կատարվողը ոչ թե դատաքննություն էր, այլ բեմականացում: Նիստերն անցկացվել են դռնփակ, անկախ դիտորդներին թույլ չի տրվել ներկա գտնվել, միջնորդություններն անտեսվել են: Դատավճռի ամբողջական տեքստը դատարանի դահլիճում չի հրապարակվել: Սույն հայտարարության հրապարակման պահին ընտանիքին տրամադրված չի եղել դատավճռի պաշտոնական, գրավոր տեքստը՝ պատշաճ թարգմանությամբ, ինչն ընթացակարգային եւս մեկ կոպիտ խախտում է ու թույլ չի տալիս նույնիսկ ֆորմալ առումով հասկանալ 20 տարվա ազատազրկման հիմքերը:

Բողոքարկումն իմաստ ունի միայն այնտեղ, որտեղ գոյություն ունի առաջին ատյանի դատարանի սխալներն ուղղելու հնարավորություն: Սակայն երբ խախտումներն ունեն համակարգային բնույթ եւ առնչվում են արդարադատության հիմնարար սկզբունքներին, բողոքարկումը վերածվում է ապօրինի հետապնդումը լեգիտիմացնող եւս մեկ գործիքի»,-գրված է հայտարարության մեջ:

ՀԵՐԹԱԿԱՆ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ

Ադրբեջանից Հայաստան է առաքվում նավթամթերքի հերթական խմբաքանակը: Այս մասին հայտնում է APA-Economics ադրբեջանական լրատվամիջոցը: Ըստ լրատվամիջոցի տեղեկությունների՝ առաքվում է 4 հազար 500 տոննա դիզելային վառելիք:

Հայաստանը 2026թ. հունվարին Ադրբեջանից ներմուծել էր 1000 տոննա A-92 տեսակի բենզին, նույնքան դիզվառելիք եւ 1800 տոննա A-95 տեսակի բենզին: Դա Ադրբեջանից Հայաստան ներմուծված վառելիքի երկրորդ խմբաքանակն էր: Վառելիքի առաջին խմբաքանակը ներմուծվել էր 2025թ. դեկտեմբերին: Այդ ժամանակ ներմուծվել էր A-95 տեսակի բենզին՝ 1218 տոննա քաշով:

ԿՐՃԱՏՎԵԼ Է

Հայաստանի արտաքին առեւտրաշրջանառությունն ընթացիկ տարվա հունվարին, 2025 թվականի նույն ամսվա համեմատ, կրճատվել է 12 տոկոսով՝ կազմելով 1 մլրդ 275.7 մլն դոլար: Դեկտեմբերի համեմատ ծավալը նվազել է 49.2 տոկոսով: Այս մասին հայտնում է ՀՀ վիճակագրական կոմիտեն:

2026 թվականի հունվարին արտահանումը համապատասխանաբար 13.5 եւ 55 տոկոսով պակաս է եղել նախորդ տարվա հունվար եւ դեկտեմբեր ամիսների ցուցանիշից՝ կազմելով 463.9 մլն դոլար:

ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական արժույթի փոխարժեքը եղել է 379.98 դրամ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՈՒՅՍԵՐ

Հույս ունենք տեսնել իրական փոփոխություններ Հայաստան-Թուրքիա հարաբերություններում, հայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ընդգծելով՝ տրամադրությունը տարածաշրջանում փոխվում է, լարվածություն չկա: Վարչապետը հավելել է, որ վերջին տարիներին բավականին ակտիվ երկխոսություն կա Թուրքիայի հետ: «Ես մի քանի անգամ հանդիպել եմ նախագահ Էրդողանի հետ: Անցյալ տարի հունիսին առաջին երկկողմ աշխատանքային այցս տեղի ունեցավ Թուրքիա, մենք շատ դրական երկխոսություն ունենք, բայց մյուս կողմից իրավիճակը բավական հասունացել է, որպեսզի գործնական քայլի վերածվի: Ինչպես գիտեք, Հայաստան-Թուրքիա սահմանը փակված է 90-ականների սկզբից, եւ մենք հույս ունենք տեսնել սահմանի բացումը, կան նախագծեր տրանսպորտի հետ կապված»,-ասել է Փաշինյանը:

ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը հայտնել է, որ Հայաստանում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին Ադրբեջանը չի մասնակցի: Ինչպես հաղորդում է ադրբեջանական APA գործակալությունը, այդ մասին Բայրամովն ասել է լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ: «Ադրբեջանի տարբեր մակարդակներով մասնակցություն Հայաստանում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին նախատեսված չէ»,-ասել է Բայրամովը: Նա հստակեցրել է, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի՝ մայիսի խիտ եւ հագեցած օրակարգում նման այց նախատեսված չէ:

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

Կառավարությունը նոր որոշում է ընդունել՝ սահմանելով հայտարարագրման ոչ ենթակա նվազեցվող եկամուտների տեսակներ ու շեմեր, մասնավորապես հայտարարագրման ենթակա չեն լինի մինչեւ 1 մլն դրամի միանվագ փոխանցումները: Որոշումը հավանության արժանացավ Կառավարության փետրվարի 26-ի նիստում: Նախորդ տարի սահմանվել էր, որ հայտարարագրման ենթակա չեն ընտանիքի անդամներից ստացվող նվազեցվող եկամուտները: Հայտարարատու ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ծնողները, քույրերը, եղբայրները, զավակները, պապերը, տատերը եւ թոռները:

«Այս նախագծով առաջարկվում է սահմանել, որ հայտարարագրման ենթակա չեն ստացվող վարկերի գումարները՝ առանց գումարային սահմանափակման, ընտանիքի անդամ չհամարվող ֆիզիկական անձանցից մինչեւ 1 մլն դրամը միանվագ ստացվող փոխառությունների գումարները, ոչ առեւտրային կազմակերպություններից միանվագ մինչեւ 1 մլն դրամը ներառյալ անհատույց ստացվող ակտիվները, ժառանգության եւ նվիրատվության կարգով ընտանիքի անդամ չհամարվող ֆիզիկական անձանցից միանվագ՝ մինչեւ 1 մլն դրամ արժեքով ստացվող գույքը, դրամական միջոցները եւ այլն»,-ասաց ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

ՍՈՒՏ ՅՈՒՅՄՈՒՆՔ

ԴԱՎԻԹ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԸ ԱՐԴԱՐԱՑՎԵՑ

ArmLur.am-ը հարց է ուղղել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանին՝ արդյոք ներողություն չի խնդրելու Դավիթ Սանասարյանից:

Մեր հարցին ի պատասխան՝ Արսեն Թորոսյանն ասաց. «Իրավապահ մարմիններն են որոշում՝ այս կամ այն անձին մեղադրանք առաջադրեն կամ չառաջադրեն, իսկ դատարանը որոշում է՝ արդարացնել, թե մեղավոր ճանաչել, իսկ դատարանի վճիռը բոլորի համար, ըստ էության, վերջնական ակտ է, եւ այդքանով պետք է սահմանափակվենք, ես որեւէ մեկին ոչ մի մեղադրանք չեմ առաջադրել»:

ՊՎԾ նախկին պետ Դավիթ Սանասարյանը օրերս հայտարարեց, որ իր դեմ հարուցված քրեական գործով արդարացման վճիռ է հրապարակվել. «Դատարանը հրապարակեց իմ գործով արդարացման վճիռը, որը տեւեց 7 տարի: Դատարանը հստակ արձանագրեց՝ մեղադրանքը հիմնավորված չէր, եւ ինձ արդարացրեց:

Արսեն Թորոսյանը, ում նախաքննության եւ դատաքննության ընթացքում տված ցուցմունքները հակասեցին իրար, եւ ՔՊ-ական այն մարդիկ, ովքեր ուղղակի կամ անուղղակի ոտնահարում էին անմեղության կանխավարկածը, հիմա պետք է հրապարակայնորեն ասեն՝ «սխալվել ենք»: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր քաղաքացիներին, պաշտոնյաներին եւ փաստաբաններին, ովքեր աջակցեցին այս ճանապարհին եւ հավատացին արդարության հաստատմանը»:

Հիշեցնենք, որ 2019-ին Արսեն Թորոսյանը հայտարարել էր, որ ներգրավված է Սանասարյանի իրավական գործընթացում եւ իրեն հայտնի տեղեկատվությունը տրամադրել է հարցերին ի պատասխան:

Հիշեցնենք, որ Դավիթ Սանասարյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավար, ունենալով ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնելու, ծառայության աշխատակիցներին նշանակելու եւ ազատելու, կարգապահական տույժի ենթարկելու, վերահսկվող օբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելու հանձնարարագրեր տալու, վերահսկվող օբյեկտներից ծառայության գործառույթներին առնչվող տեղեկություններ եւ փաստաթղթեր պահանջելու լիազորություններ, խմբային շահերից ելնելով, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինչպես նաեւ չի կատարել իր ծառայողական պարտականությունները:

Նշենք, որ Դավիթ Սանասարյանը չէր ընդունել մեղադրանքը եւ հայտարարել էր, որ իր նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԻՄՔ ՉԷ

Նիկոլ Փաշինյանը Վարշավայում հայտարարել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ընդհանուր տնտեսական շահը կարող է ավելի լուրջ տնտեսական հիմքեր ստեղծել կայունության համար, քան համաձայնագրերն են ու փաստաթղթերը, դա կատարյալ տգետ հայտարարություն է: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում ասել է ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը:

«Դա կատարյալ տգետ հայտարարություն է մի մարդու, ով չգիտի պատմություն, քաղաքագիտություն, կամ՝ դիտավորյալ մեզ մոլորեցնում է, այդ դեպքում նա ոչ թե տգետ է, այլ անբարո: Պատմությունից ու քաղաքագիտությունից մեզ հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ ընդհանուր տնտեսական շահը չի ամրապնդում կայունություն ու խաղաղություն:

Եվրոպական միության տարբեր երկրներում կան ռեգիոններ, որոնք շաղկապված են մայր երկրների տնտեսության հետ, սակայն, օրինակ՝ Կատալոնիայում ու Շոտլանդիայում, դա չի կանխում անջատողական շարժումները եւ անջատողականության ու անկախության ձեռքբերման գերնպատակը: Միջպետական հարաբերություններում նույնպես տնտեսական շահը չի կանխում երկու երկրների միջեւ հնարավոր սրացումներ՝ ընդհուպ պատերազմներ:

Օրինակ՝ Ռուսաստանն ու Ուկրաինան շաղկապված էին շատ խորը տնտեսական կապերով, սակայն դա չկանխեց ուկրաինական պատերազմը: Չկան երկու երկրներ, որոնք ավելի էին շաղկապված, քան Չինաստանն ու ԱՄՆ-ն, սակայն դա չի կանխում լարվածության աճը: Ընդհանուր տնտեսական շահերը հիմքեր չեն ստեղծում կայունության համար, եթե չկան դրա համար քաղաքական հիմքեր»,- նշել է նա:

Աշոտյանը շեշտել է, եթե երկու պետությունները սկսում են բացառապես տնտեսական հիմքով կայունություն կառուցել, ապա առաջանում է վտանգ՝ ուժեղից դեպի թույլ, մեծ փողերով ավելի աղքատ կամ թույլ երկիր մտնելու հնարավորություն:

Նրա խոսքով՝ Նիկոլ Փաշինյանի հերթական լոլոները եւ կեղծ հիմնավորումները մեզ հիմք չեն տալիս մտածելու, որ նա կարող է բերել կայուն խաղաղություն. «Մեզ անվտանգություն է պետք, որից կբխի նաեւ խաղաղությունը, իսկ անվտանգությունը շատ ավելի բարդ հասկացություն է, քան միասին աշխատած բենզինի 10 մանաթը կիսելու հմտությունները»:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ ՓՈՐՁԵՐԸ

Հարավային Կորեայի նախագահ Լի Չժե Մյոնը իր օգնականների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է ԿԺԴՀ-ի հետ համագործակցության ձգտելու անհրաժեշտության մասին՝ ի հեճուկս Փհենյանի կողմից հնչող թշնամական հայտարարությունների:

«Ես հավատում եմ, որ Կորեական թերակղզում կարող է հաստատվել երկարատեւ խաղաղություն եւ կայունություն՝ մշտական հաղորդակցության, երկխոսությանը մասնակցելու եւ համագործակցության ուղղությամբ ջանքերի, ինչպես նաեւ վստահության եւ փոխըմբռնման աստիճանական ամրապնդման օգնությամբ»:

Լի Չժե Մյոնը վստահություն է հայտնել, որ երկու երկրներն էլ պետք է ձգտեն խաղաղության՝ հրաժարվելով այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել առճակատման եւ պատերազմի: Նա ընդգծել է, որ Սեուլը պետք է խորհի, թե արդյոք «անցյալում ԿԺԴՀ-ի նկատմամբ նվաստացման եւ սպառնալիքների գործողությունները» նպաստել են խաղաղությանը թերակղզում:

Ավելի վաղ Փհենյանում տեղի է ունեցել Կորեայի աշխատավորական կուսակցության իններորդ համագումարը, որտեղ ԿԺԴՀ-ի առաջնորդ Կիմ Չեն Ընը վճռականորեն մերժել է Հարավային Կորեայի հետ ցանկացած երկխոսություն:

ՎՃԻՌ

ԴԵՊԱՆԻ ԵՂԲԱՅՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ

Հայտնի դարձավ, որ Արմավիրի մարզի դատարանի դատավոր Հրաչյա Մեխակյանը վճիռ է կայացրել ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանի եղբոր՝ ապօրինի զենք պահելու քրեական գործով:

Մեղադրյալ Մկրտիչ Արշակի Մկրտչյանին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ, եւ նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձեւով պատիժ՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

1.2. ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հաշվակցել Մկրտիչ Արշակի Մկրտչյանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 03-ից մինչեւ 2026 թվականի հունվարի 03-ը փաստացի անազատության մեջ գտնվելու 4 (չորս) ամիս ժամկետը, եւ նրա նկատմամբ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում՝ 8 (ութ) ամիս ժամկետով: 1.1. ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ՝ մեղադրյալ Մկրտիչ Արշակի Մկրտչյանի նկատմամբ ազատազրկման ձեւով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Փորձաշրջանի ընթացքում մեղադրյալ Մկրտիչ Արշակի Մկրտչյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության տարածքային մարմնին: Մկրտիչ Արշակի Մկրտչյանի վրա դնել պարտականություն՝ վերահսկողության ընթացքում առանց պրոբացիայի ծառայության համաձայնության չլքել Հայաստանի Հանրապետության տարածքը, իսկ բնակության վայրը փոխելու դեպքում՝ նոր բնակության վայրի հասցեն սեղմ ժամկետում հայտնել պրոբացիայի ծառայությանը:

ArmLur.am-ը հայտնել էր, որ ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանի եղբոր՝ Մկրտիչ Մկրտչյանի քրեական գործը քննում է դատավոր Հրաչյա Մեխակյանը, որը ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի քրոջ որդին է, Արմավիրի նախկին քաղաքապետ Ռուբեն Խլղաթյանի փեսան:

ArmLur.am-ը հայտնել էր նաեւ, որ ԱՄՆ-ում ՀՀ դեսպանի եղբորը մեղադրանք է առաջադրվել ապօրինի զենք պահելու համար: Մկրտիչ Մկրտչյանը ձերբակալվել էր օգոստոսի 4-ին: ՀՀ քննչական կոմիտեից ArmLur.am-ին հայտնել էին, որ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը), 393-րդ հոդվածի 1-ին մասով (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը) եւ 396-րդ հոդվածի 1-ին մասով (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի):

Փաստացի նախաքննական մարմինը բավարարվեց միայն ԱՄՆ-ում ՀՀ դեսպանի եղբորը ապօրինի զենքի գործով մեղադրյալի կարգավիճակ տալով, իսկ թմրանյութի թեման ծածկադմփոց արեցին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՆՑԱՎՈՐ ԽՈՒՄԲ

Համակարգչային տեխնիկայի կիրառմամբ հանցավոր գործունեություն իրականացնող անձինք եւ կազմակերպությունները Քրեական ոստիկանության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության օպերատիվ տեսադաշտում են:

Վարչությունում ստացված հերթական օպերատիվ տեղեկությունը մայրաքաղաքի Պարոնյան փողոցի հասցեներից մեկի կիսանկուղային հարկում գործող գրասենյակային նշանակության տարածքում մի խումբ անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ էր:

«Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ մի խումբ անձինք, նախնական համաձայնությամբ վարձակալելով Երեւան քաղաքի Պարոնյան փողոցում գտնվող կիսանկուղային գրասենյակային նշանակության տարածքը, այն կահավորել են հատուկ համակարգչային տեխնիկայով եւ դրանցում ներբեռնված հատուկ ծրագրակազմերի կիրառմամբ կատարել նամակագրություն, ինչպես նաեւ հեռախոսազանգեր ունեցել ԱՄՆ-ում բեռնափոխադրման գործընթաց իրականացնող անձանց հետ, որոնց առաջարկել իրականացնել բեռնափոխադրում տարբեր ապրանքների համար: Հիշյալ գործընթացի ընթացքում ենթադրյալ հանցավոր մեխանիզմը կիրառող անձինք իրենց վստահված ուղեբեռը հափշտակել են եւ այն տեղափոխել այլ հասցե, որը հետագայում վաճառվել է տարբեր երկրներում»,- նշել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Քրեական ոստիկանության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչություն բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող հափշտակությունների դեմ պայքարի բաժնի պետ Վաղինակ Մինասյանը:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցավոր գործունեությամբ զբաղվող անձանց ինքնությունը: Պարզվել է, որ խմբի տարբեր անդամներ պարբերաբար այցելել են նշված հասցե եւ գործունեության դիմաց վարձատրվել կանխիկ՝ ԱՄՆ դոլարով:

Իրականացված միջոցառումների արդյունքներով Քննչական կոմիտե է ներկայացվել առերեւույթ հանցագործության մասին հաղորդում: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Փետրվարի 20-ին Քրեական ոստիկանության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության ծառայողները Երեւան քաղաքի քննչական վարչության գործընկերների հետ համատեղ, դատարանի որոշմամբ, Երեւան քաղաքի Պարոնյան փողոցի հասցեներից մեկի կիսանկուղային հարկում գտնվող գրասենյակում իրականացրել են անակնկալ խուզարկություն:

«Հայտնաբերվել են տարբեր տեսակի թվային տեղեկություններ ենթադրյալ բեռնափոխադրման գործընթացը կազմակերպելու վերաբերյալ, ինչպես նաեւ բջջային հեռախոսներ, որոնք օգտագործվել են բեռնափոխադրման գործընթացը ապահովելու նպատակով: Հայտնաբերված ամբողջ համակարգչային տեխնիկան առգրավվել է եւ փոխանցվել է Քննչական մարմին՝ հետագա նախաքննական գործողություններ իրականացնելու նպատակով»,- նշել է Վաղինակ Մինասյանը:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում 4 անձ ձերբակալվել է: Կատարվում է նախաքննություն:

Քրեական ոստիկանության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչությունը համագործակցում է ԱՄՆ իրավապահ մարմինների հետ՝ ենթադրյալ հանցավոր մեխանիզմի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու ուղղությամբ:

ԶԵՆՔ–ԶԻՆԱՄԹԵՐՔ

Փետրվարի 23-ին ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնել էր, որ Նորագավիթի ջերմոցների հարակից տարածքում զենք-զինամթերք է թողել:

Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողները նշված վայրում հայտնաբերել են «ՏՕՋ» տիպի ակոսափող հրացան, «Ֆ1» տիպի նռնակ՝ պայթուցիչով, տարբեր տիպի եւ տրամաչափի 321 փամփուշտ եւ ծխանռնակ:

ՆԳՆ ոստիկանությունը հորդորում է քրեական պատասխանատվությունից խուսափելու համար ապօրինի զենք-զինամթերքը կամավոր հանձնել ոստիկանություն:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության խոշտանգումների եւ պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչությունում իրականացվող քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալներով հաստատվել է, որ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ Հ.Թ.-ն առանց որեւէ հիմնավորման, 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան ՀՀ ոստիկանության ծառայողներին հանձնարարել է ծեծի ենթարկել Երեւանի Ազատության հրապարակում իրականացվող հանրահավաքի մասնակից Է.Ա.-ին եւ տեղափոխել ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն:

Դրանից անմիջապես հետո ոստիկանության ծառայողները կատարել են ակնհայտորեն իրենց պաշտոնեական լիազորություններից չբխող եւ դրանց շրջանակից դուրս արարք: Մասնավորապես բռնություն են գործադրել Է.Ա.-ի նկատմամբ՝ ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելով նրա մարմնի տարբեր մասերին՝ առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս:

Նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ Հ.Թ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելուն դրդելը): 2026 թվականի փետրվարի 25-ին Հ.Թ.-ն ձերբակալվել է՝ դատարան ներկայացնելու համար:

Նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում «Մարտի 1»-ի քրեական գործի շրջանակում սպասվում են նոր ձերբակալություններ: Մեր աղբյուրները հայտնում են, որ դրանք վերաբերելու են ոստիկանության համակարգի նախկին բարձրաստիճան պաշտոնյաներին, եւ ցանկը միայն երկու անձով չի սահմանափակվելու:

ԱՊՕՐԻՆԻ

Փետրվարի 17-ին թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու եւ իրացնելու վերաբերյալ օպերատիվ տեղեկություն էր ստացվել Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունում: Նույն օրը մայրաքաղաքի Ամիրյան-Սարյան փողոցների խաչմերուկում քրեական ոստիկանները ձերբակալեցին Երեւանի բնակիչ 35-ամյա տղամարդուն:

Նա տեղափոխվեց Համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժին, որտեղ էլ խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեց հերոինով լցված 14 փաթեթ, որոնց ընդհանուր քաշը կազմեց ավելի քան 8 գրամ:

Տղամարդն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 24-ից 25-ը բացահայտվել է 168 հանցագործություն, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՍԽԱԼՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում հունվարի 30-ից տեղադրված է հետեւյալ տեղեկատվությունը. «ՀՀ Կառավարության կողմից, «300 մանկապարտեզ, 500 դպրոց» ծրագրի շրջանակներում, ամբողջությամբ վերանորոգվում է Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 128.5 մլն դրամ»: Դրան կից տեղադրված է Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգման մասին տեսանյութ:

Կառավարության ծրագիրը ոչ թե կոչվում է «300 մանկապարտեզ, 500 դպրոց», այլ «300 դպրոց, 500 մանկապարտեզ»: Առանց այդ էլ կառավարությունը խախտել է այդ ծրագիրը՝ դրանցում ընդգրկված դպրոցների ու մանկապարտեզների թվաքանակի եւ կրթական հաստատությունների շենքերի կառուցման, նորոգման ժամկետների առումով:

Կարող է թվալ, թե Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրված, ծրագրի սխալ վերնագիրը լոկ թյուրիմացություն է: Սակայն այդպես չէ, դա Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետի ու համայնքապետարանի աշխատակազմի անփույթ, անպատասխանատու գործունեության դրսեւորում է:

2021թ. փետրվարի 26-ից Դիլիջան խոշոր համայնքը ղեկավարող, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը հունվարի 31-ին «Ֆեյսբուք»-ի իր էջում լուր է տեղադրել Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգման մասին՝ գրելով. ««300 մանկապարտեզ, 500 դպրոց» ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից վերանորոգվում է Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզը»: Այս դեպքում եւս համայնքի ղեկավարը սխալ է գրել կառավարության ծրագրի անվանումը՝ խառնելով դրանում ընդգրկված դպրոցների ու մանկապարտեզների թվերը:

Սխալները Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային, պաշտոնական կայքում շատ են: Հունվարի 27-ին կայքում տեղեկատվություն է տեղադրվել այս վերնագրով. «Հունվարի 27-ը հանուն մեր հայրենիքի համար զոհվածների հիշատակի օրն է»: Հանուն հայրենիքի նշանակում է հայրենիքի համար, այսինքն՝ հայրենիքի համար զոհվածների հիշատակի օրվան նվիրված լուրի մեջ կա անհարկի կրկնություն: Համայնքապետարանի ինտերնետային կայքում հունվարի 20-ին, 21-ին եւ 22-ին տեղադրվել են տարբեր նյութեր, դրանք կայքում իրար են հաջորդում, բոլորն էլ ունեն նույն վերնագիրը՝ «Մասնակցային բյուջետավորման գործընթացի մասին»: Դուք ուրիշ վերնագիր չգիտե՞ք:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻ՞Ք, ԹԵ՞ ՃՆՇՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ վերսկսված միջուկային բանակցությունների ֆոնին Միացյալ Նահանգները վերադասավորել է իր հիմնական ռազմածովային ուժերը Պարսից ծոցում եւ Արաբական ծովում: Այս քայլը որոշ լրատվամիջոցներ գնահատում են որպես լայնածավալ պատերազմի նախանշան, սակայն վերլուծաբանների կարծիքով՝ այն կարող է լինել ռազմական ազդանշան՝ բանակցային դիրքերը ամրապնդելու նպատակով:

Աշխարհի ամենամեծ ռազմանավը՝USS Gerald R. Ford, փոխել է իր երթուղին եւ ուղղվել տարածաշրջան: Հիշեցնենք, որ Իրանի ջրերին հարակից տարածքներում միաժամանակ գործում են ԱՄՆ-ի երկու ավիակիր հարվածային խմբեր:

Ավելի վաղ USS Abraham Lincoln-ը տեղակայված էր Արաբական ծովում եւ Պարսից ծոցի մերձակայքում. արբանյակային վերջին տվյալները հաստատում են դրա ներկայությունը Օմանի մոտ՝ հյուսիսային Արաբական ծովում: Իսկ «Ջերալդ Ռ. Ֆորդ»-ը, Կարիբյան տարածաշրջանում երկարատեւ առաքելությունից հետո, Պենտագոնի ուղիղ հրահանգով փոխել է ուղղությունը, փետրվարի 20-ին անցել է Ջիբրալթարի նեղուցով եւ ներկայում շարժվում է արեւելք՝ Միջերկրական ծովում:

Թեեւ նման տեղաշարժերը ԱՄՆ ռազմածովային ուժերի ռոտացիոն ծրագրի մաս են, ներկայիս պայմաններում դրանք ստացել են առավել խորհրդանշական եւ կոշտ երանգ՝ հաշվի առնելով Վաշինգտոնի ճնշումը արագ միջուկային համաձայնության հասնելու հարցում:

Խորհրդանշական ազդա՞նշ, թե՞ իրական պատրաստություն

ԱՄՆ ավիակիրները ոչ միայն ռազմական գործիք են, այլեւ Վաշինգտոնի գլոբալ հզորության խորհրդանիշ: Երկու ավիակիրների միաժամանակյա ներկայությունը դիտվում է որպես զսպման ուղերձ եւ բանակցային լծակների ուժեղացում:

Սակայն որոշ փորձագետներ մատնանշում են նաեւ գործնական սահմանափակումներ: «Ֆորդ»-ի առաքելությունը տեւել է ավելի քան 240 օր, եւ անձնակազմի հոգնածությունը կարող է ժամանակավորապես ազդել մարտունակության վրա: Ուստի ուժերի կենտրոնացումը գնահատվում է ավելի շատ որպես ուժի ցուցադրություն եւ դիվանագիտական ճնշում, քան անմիջական հարձակման նախապատրաստություն:

Իրանի արձագանքը՝ պաշտպանական պատրաստվածություն եւ դիվանագիտության շեշտադրում

Իրանի պաշտոնյաները արձագանքել են երկակի շեշտադրումներով՝ ընդգծելով թե՛ պաշտպանական պատրաստվածությունը, թե՛ բանակցությունների կարեւորությունը:

Փոխնախագահ Մոհամմադ Ռեզա Արեֆը հայտարարել է, որ Իրանի ռազմավարությունը պատերազմ սկսել չէ, սակայն եթե այն պարտադրվի, թշնամին չի որոշի դրա ավարտը:

Ջինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Սեյեդ Աբդոլրահիմ Մուսավին զգուշացրել է, որ Իրանի դեմ ցանկացած բախում «դաս կլինի» ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի համար:

Արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին ընդգծել է, որ դիվանագիտությունը չի կարող հաջողել ռազմական սպառնալիքի պայմաններում եւ հայտարարել է բանակցություններում հակառաջարկ ներկայացնելու պատրաստակամության մասին:

Իրանի բանակի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Աբդոլռահիմ Հաթամին էլ նշել է, որ երկիրը մշտապես հետեւում է տարածաշրջանում ամերիկյան ուժերի տեղաշարժերին եւ պատրաստ է վճռական պատասխան տալ ցանկացած «սադրանքի»:

Միեւնույն ժամանակ, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի օդատիեզերական ուժերի հրամանատար, բրիգադի գեներալ Սեյեդ Մաջիդ Մուսավին հայտարարել է, որ ցանկացած սխալ հաշվարկ կստանա «նախորդից ավելի կոշտ» պատասխան:

Թեհրանը շեշտում է նաեւ իր հիպերձայնային հրթիռների (այդ թվում՝ «Fattah-1»), անօդաչու սարքերի հնարավորությունները եւ ավիակիրներ խոցելու ունակությունը՝ միաժամանակ հայտարարելով, որ առաջնահերթությունը օրինական պաշտպանությունն ու դիվանագիտական ուղին է:

Ինչո՞ւ լայնածավալ պատերազմը քիչ հավանական է

Վերլուծաբանների կարծիքով՝ մի շարք գործոններ զսպում են լայնամասշտաբ հակամարտության վտանգը.

- ԱՄՆ-ի համար հնարավոր տնտեսական եւ ռազմական հսկայական ծախսերը,
- Իրանի պատասխան հարվածի կարողությունը տարածաշրջանում տեղակայված ամերիկյան բազաների դեմ,
- էներգետիկ շուկաների ապակայունացման ռիսկերը եւ դաշնակիցների մտահոգությունները,
- ԱՄՆ-ի նախկին երկարատեւ պատերազմների բացասական փորձը:

Այսպիսով, Պարսից ծոցում եւ Միջերկրական ծովում տեղի ունեցող զարգացումները փորձագետների գնահատմամբ ավելի շատ դիվանագիտական «շախմատի» քայլեր են, քան պատերազմի անմիջական նախապատրաստություն:

Վաշինգտոնը փորձում է ուժի առավելագույն ցուցադրությամբ ամրապնդել իր դիրքերը բանակցություններում, մինչդեռ Թեհրանը համադրում է բարձր պաշտպանական պատրաստվածությունն ու դիվանագիտական ուղին՝ պաշտպանելով իր ազգային անվտանգությունն ու շահերը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԵՌԱՑԵԼ ԵՆ

Բահրեյնի բազայում գտնվող ամերիկյան նավերի մի խումբ լքել է տարածքը՝ ուղղվելով Պարսից ծոցի ջրեր: Ինչպես տեղեկանում ենք «Ինտերֆաքս» գործակալությունից, այդ մասին հաղորդում է The Associated Press-ը՝ վկայակոչելով ամերիկյան Planet Labs ընկերության արբանյակային լուսանկարները, որոնք արվել են փետրվարի 25-ին: Մերձավոր Արեւելքում ԱՄՆ-ի զինված ուժերի կենտրոնական հրամանատարությունը (CENTCOM) հրաժարվել է մեկնաբանել իրադրությունը: The Associated Press-ը հիշեցնում է, որ անցյալ տարվա հունիսին Քաթարի վրա Իրանի գրոհից առաջ ամերիկյան 5-րդ նավատորմը նմանօրինակ ձեւով իր նավերը դուրս էր բերել բազայից եւ տարակենտրոնացրել ծովում՝ հնարավոր հարձակումից պաշտպանվելու համար:

ԱՄՆ-ի ռազմածովային ինստիտուտի տեղեկատվական ծառայության տվյալներով՝ Պարսից ծոցի արեւելյան մասում, Հորմուզի նեղուցի մերձակայքում, շարունակում են գտնվել ամերիկյան USS Mitscher եւ USS Michael Murphy հրթիռային էսկադրային ականակիրները եւ ափամերձ գոտու USS Canberra մարտանավը: Դրանց գտնվելու վայրի որեւէ փոփոխության մասին տվյալներ չկան: Մինչդեռ ավելի վաղ ափամերձ գոտու երկու մարտական նավ՝ USS Tulsa-ն եւ USS Santa Barbara-ն, արդեն դուրս են բերվել Պարսից ծոցից:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

Միացյալ Նահանգների պետքարտուղար Մարկո Ռուբիոն հայտարարել է, որ Ուկրաինան կարողացել է շուրջ չորս տարի դիմանալ Ռուսաստանի դեմ պատերազմին ԱՄՆ կողմից Կիեւին տրամադրած ու վաճառած զենքերի, ինչպես նաեւ ամերիկյան կողմի հետախուզական տվյալների ու այլ աջակցության շնորհիվ: ԱՄՆ պետքարտուղարը նշել է, որ ռուս-ուկրաինական պատերազմը չի կարող ռազմական լուծում ունենալ: «Պատերազմը կարգավորվելու է բանակցությունների միջոցով: Եւ հիմա մենք միակ երկիրն ենք աշխարհում, որը կարող է լինել բանակցությունների կատալիզատորը: Եթե մենք հրաժարվենք այդ դերից, ոչ ոք չի կարող դա անել»,- ասել է Ռուբիոն լրագրողների հետ զրույցում:

Նա ընդգծել է, որ այս հարցում ԱՄՆ նախագահի համբերությունն անսահման չէ: «Սակայն ես չեմ պատրաստվում կանխատեսել, թե երբ է այն սպառվելու կամ որ պահին նա կորոշի այլեւս չանել դա: Կարող եմ ձեզ ասել, որ նա խորը հիասթափություն է ապրում, որ սա (խմբ. պատերազմը) դեռ չի ավարտվել, քանի որ նա այն համարում է լիովին անիմաստ պատերազմ, որի ընթացքում ամեն շաբաթ մարտի դաշտում զոհվում է 7000-8000 զինվոր»,- ասել է Ռուբիոն՝ ընդգծելով, որ կատարվող գործողությունները հսկայական վնաս են հասցնում ինչպես Ռուսաստանին, այնպես էլ Ուկրաինային, որտեղ ամեն օր ավելի ու ավելի շատ ավերածություններ են լինում, որոնց վերականգնման համար երկար տարիներ են պահանջվելու:

ԱՄՆ պետքարտուղարը նշել է, որ ամերիկյան կողմը մեծ ջանքեր է գործադրում հակամարտության դադարեցման նպատակով: «Կարծում եմ, որ մենք առաջընթաց ենք գրանցել խնդիրների շրջանակի նեղացման հարցում, բայց կարծում եմ նաեւ, որ որոշ խնդիրներ դեռեւս մնում են, որոնք, ցավոք, շատ-շատ դժվար են»,- ասել է նա:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ փետրվարի 24-ից 25-ը գրանցվել է 9 ավտովթար. 2 մարդ մահացել է, 13-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՌԱՔՄԱԿԱՆ ՍՑԵՆԱՐ

Ամերիկայի Միացյալ Նահանգները ձգտում է Թեհրանի հետ միջուկային խնդրի խաղաղ կարգավորման, սակայն պատրաստ է կիրառել ռազմական ուժ, եթե դիվանագիտական ջանքերը ձախողվեն:

Ինչպես հաղորդում է «ՏԱՍՍ»-ը, այս մասին Fox News-ին տված հարցազրույցում ասել է ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը: «Վերջնական արդյունքում նախագահը որոշում կկայացնի այն մասին, թե ինչպես երաշխավորի Իրանի միջուկային զենք չունենալը, բայց մենք այժմ իրանցիների հետ դիվանագիտական բանակցությունների մեկ այլ փուլում ենք՝ փորձելով հասնել ողջամիտ համաձայնության: Իրանը չի կարող միջուկային զենք ունենալ: Կարծում եմ՝ գերագույն առաջնորդը եւ նրա համակարգի բոլոր անդամները պետք է հասկանան դա: Մենք շատ հստակ ենք եղել եւ հույս ունենք, որ կարող ենք լավ լուծման հասնել առանց զինվորականների, բայց եթե մենք ստիպված լինենք դիմել բանակին, նախագահն անկասկած ունի այդ լիազորությունը»,- նշել է Վենսը:

ՆԱՎԹԻ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

Հունգարիան եւ Սլովակիան փետրվարի 25-ին Եվրահանձնաժողովում նավթին նվիրված նիստում հայտարարել են, որ արդեն սկսել են օգտագործել նավթի ճգնաժամային պաշարները՝ Ուկրաինայի կողմից «Դրուժբա» խողովակաշարով մատակարարումների դադարեցման ֆոնին: Ինչպես հայտնում են «ՌԻԱ Նովոստի» գործակալությունից, այդ մասին հայտնել է Եվրահանձնաժողովի ներկայացուցիչ Աննա Կայսա Իտկոնենը:

«Եւ Հունգարիան, եւ՛ Սլովակիան հաստատել են, որ սկսել են բաց թողնել իրենց պահուստային նավթը: Այդ պաշարները պահվում են բոլոր անդամ պետությունների կողմից հատկապես նման իրավիճակները հաղթահարելու համար», - ասել է նա Բրյուսելում կայացած ճեպազրույցի ժամանակ՝ մեկնաբանելով «Դրուժբա» խողովակաշարով նավթի մատակարարումների դադարեցման հետ կապված իրադրությունը:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ այդ պաշարները երկրներին պետք է որ բավականացնեն 90 օր:

Սլովակիան փետրվարի 24-ից դադարեցրել է Կիեւին էլեկտրաէներգիայի արտակարգ մատակարարումները «Դրուժբա» խողովակաշարով նավթի մատակարարումների դադարեցման պատճառով:

Ավելի վաղ Սլովակիան եւ Հունգարիան դադարեցրել են Ուկրաինային դիզելային վառելիքի մատակարարումները: Երկու երկրները Կիեւին մեղադրում են ռուսական հարվածներից վնասված խողովակաշարի վերանորոգումը քաղաքական պատճառներով դիտավորյալ հետաձգելու համար: «Դրուժբա»-ով նավթի տարանցումը դադարեցնելու պատճառով Հունգարիան արգելափակել է Ռուսաստանի դեմ ԵՄ պատժամիջոցների 20-րդ փաթեթը, ինչպես նաեւ Կիեւի համար նախատեսված 90 միլիարդ եվրոյի վարկի հաստատումը:

«ՌԵՆՇԻՆ»

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

«Ռենշին» բաղամասային-ներդրումային ընկերությունը հայտարարեց անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման մեկնարկի մասին: Պարտատոմսերի տեղաբաշխողն է Ամերիաբանկը:

«Ռենշին»-ն ավելի քան 24 տարվա պատմություն ունեցող քաղաքաշինական-ներդրումային ընկերություն է, որը գործունեության ընթացքում իրականացնում է շուրջ 1 միլիոն քմ բարձրակարգ կառուցապատում:

Պարտատոմսերի թողարկման առթիվ «Ռենշին»-ի ֆինանսական տնօրեն Քրիստինե Չիչյանը նշում է. ««Ռենշին» ընկերությունը միջազգային հեղինակավոր գործընկերների հետ համատեղ իրականացնում է մի շարք խոշոր նախագծեր, այդ թվում՝ Artlife Kempinski Residences, Skyline, WTCY: Ընկերության հաջողությունը պայմանավորված է հավակնոտ գաղափարներով եւ դրանք իրագործելու կարողություն ունեցող թիմով»:

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր ծրագրային ծավալը կազմում է 10 միլիարդ ՀՀ դրամ, որի շրջանակներում թողարկվել է պարտատոմսերի 3 սերիա՝ ՀՀ դրամով եւ ԱՄՆ դոլարով.

- Սերիա 1 - 2,300,000,000 ՀՀ դրամ, 12% արժեկտրոնային եկամտաբերություն, 3 տարի շրջանառության ժամկետ:
- Սերիա 2 - 10,000,000 ԱՄՆ դոլար, 8% արժեկտրոնային եկամտաբերություն, 3 տարի շրջանառության ժամկետ:
- Սերիա 3 - 10,000,000 ԱՄՆ դոլար, 8.5% արժեկտրոնային եկամտաբերություն, 5 տարի շրջանառության ժամկետ:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը դրամային պարտատոմսերի դեպքում կազմում է 1,000,000 ՀՀ դրամ, իսկ դոլարային պարտատոմսերի դեպքում՝ 10,000 ԱՄՆ դոլար: Զեռքբերման նվազագույն քանակը դրամային պարտատոմսերի դեպքում 10 հատ է, դոլարային պարտատոմսերի դեպքում՝ 2 հատ: Բոլոր սերիաների դեպքում արժեկտրոնների վճարման պարբերականությունը 6 ամիս է:

Պարտատոմսերը կարելի է ձեռք բերել առցանց՝ Ամերիաբանկի MyAmeria հավելվածի MyInvest ներդրումային հարթակի միջոցով, կամ այցելելով Ամերիաբանկի որեւէ մասնաճյուղ եւ լրացնելով հայտ-հանձնարարականը, կամ ուղարկելով լրացված հայտ-հանձնարարականի ձեւն Ամերիաբանկի էլ. հասցեին՝ capitalmarkets@ameriabank.am:

ԱՇԽԱՐՀ

ԲԱՆԱԿԻ ԹԻՎԸ ԿԱՎԵԼԱՑՎԻ

Լեհաստանը ցանկանում է իր բանակի թվաքանակը հասցնել 500 հազարի:

Ինչպես հաղորդում է «ՌԻԱ Նովոստի»-ն, այս մասին լրագրողներին հայտնել է Լեհաստանի պաշտպանության նախարար Վլադիսլավ Կոսինյակ-Կամիշը:

Վերջին պաշտոնական տվյալների համաձայն՝ լեհական բանակում կա 218 հազար մարդ:

«Կես միլիոնանոց բանակ: Սա մի քանի տարվա ռազմավարական նպատակ է, որը մենք կիրականացնենք»,-նշել է Կոսինյակ-Կամիշը: Նա ընդգծել է, որ դա վերաբերում է եւ՛ պրոֆեսիոնալ բանակին, եւ՛ տարածքային պաշտպանության ուժերին: «Սա եւ՛ պրոֆեսիոնալ բանակ է, եւ՛ տարածքային պաշտպանության պահեստազոր: Եւ մենք այս տարի մեծ ուշադրություն կդարձնենք այս բարձր պատրաստվածության պահեստազորին», - ընդգծել է նախարարը:

ԹՌՉՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

Տոկիոյում տեղի է ունեցել Ճապոնական SkyDrive Inc. ստարտափի կողմից մշակված թռչող ավտոմեքենայի առաջին փորձնական թռիչքը: Այս մասին հաղորդում է ՏԱՍՍ գործակալությունը՝ հղում անելով մշակող ընկերությանը:

Ցուցադրական թռիչքի ընթացքում մեքենան հաղթահարել է մոտավորապես 150 մետր հեռավորություն Տոկիոյի ծոցի օդային տարածքում: Այն օդում է գտնվել 3,5 րոպե:

SD-05 թռչող ավտոմեքենան հանդերձված է կուտակիչներով եւ 12 ռոտորային շարժիչներով, որոնք ունեն քվադրոկոպտերների պտուտակների նման թիակներ: Այն նախատեսված է երեք մարդու համար եւ կարող է հաղթահարել 15-ից մինչեւ 40 կիլոմետր հեռավորություն:

Իր չափերի շնորհիվ SD-05-ը կարող է վայրէջք կատարել այն վայրերում, որտեղ դա չի կարող անել ուղղաթիռը: SkyDive-ի գլխավոր տնօրեն Տոմոհիրո Ֆուկուձավայի խոսքով՝ թռիչքի արժեքն ապագայում կարող է մոտավորապես կրկնապատիկ ավելի լինել, քան տաքսունը, իսկ ճանապարհի ժամանակը՝ չորսից հինգ անգամ պակաս:

ՀԱՆՐԱՔՎԵ ԿԱՆՑԿԱՑՆԻ

Իսլանդիան առաջիկա ամիսներին հանրաքվե կանցկացնի Եվրամիությանն անդամակցության բանակցությունները վերսկսելու շուրջ, հայտարարել է երկրի վարչապետ Քրիստրուն Ֆրոստադոտիրը Լեհաստան այցի ժամանակ: Այս մասին հաղորդում է Reuters գործակալությունը:

«Առաջիկա ամիսներին հանրաքվե կանցկացնենք անդամակցության բանակցությունները վերաբացելու շուրջ, որպեսզի Իսլանդիան, հնարավոր է, միանա ԵՄ-ին», - ասել է վարչապետ Ֆրոստադոտիրը փետրվարի 25-ին Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկի հետ համատեղ մամուլի ասուլիսում:

Իսլանդիան 2013 թվականին՝ չորս տարվա բանակցություններից հետո, հրաժարվել էր ԵՄ-ին անդամակցության շուրջ բանակցություններից: Սակայն, ըստ հարցումների, ապրուստի գների աճը եւ ռուս-ուկրաինական պատերազմը կրկին նման ցանկություն են առաջացրել կղզի-պետության բնակիչների մոտ: Reuters-ը նաեւ որպես պատճառ նշում է Գրենլանդիան բռնակցելու վերաբերյալ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի սպառնալիքները. Դանիայի կազմի մեջ մտնող Գրենլանդիան գտնվում է Միացյալ Նահանգների եւ Իսլանդիայի միջեւ:

Իսլանդիան արդեն իսկ ԵՄ միասնական շուկայի, Շենգենյան գոտու եւ Ազատ առեւտրի եվրոպական ասոցիացիայի մաս է կազմում: Գրեթե 400 000 բնակչություն ունեցող երկիրը նաեւ ՆԱՏՕ-ի անդամ է:

ԴՐԱԿԱՆ Է ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ինչպես հայտնում է Վրաստանի առաջին ալիքը, Վրաստանի արտաքին գործերի նախարար Մակա Բոճորիշվիլին ասել է՝ այդ այցը ցույց է տալիս, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարեւորում է Հարավային Կովկասում խաղաղության հաստատումը: Նրա խոսքով՝ Թբիլիսին եւս իր ներդրումն է կատարում այդ գործընթացում:

Անդրադառնալով պնդումներին, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաղորդակցային ուղիների ապաշրջափակման պարագայում Վրաստանը կարող է դուրս մնալ տարածաշրջանային գործընթացներից՝ Բոճորիշվիլին նշել է, որ Վրաստանի դերն անհնար է թերագնահատել:

«Ոչ ոք չի բացառում այլընտրանքային ուղիների գոյությունը, եւ դրանում ոչ մի վատ բան չկա», - ասել է նախարարը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԾ ՊԱՀՔ

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻՆ՝ ԱՐՏԱՔՍՄԱՆ

Արտաքսման կիրակիի եւ նրա անվան ծագման մասին Աստվածաշնչի Ծննդոց գրքում գրված է. «...Եւ արտաքսեց նրան Աստված Եդեմի պարտեզից, որպեսզի մշակի հողը, որից եւ ստեղծվել էր» (Ծնն. 3:23): Այն հիշեցնում է Ադամի՝ դրախտից արտաքսումը՝ իր անհնազանդության պատճառով: Արտաքսման կիրակին նաեւ մեղքի ու մահվան դառնության ճաշակման մասին է:

Արտաքսման կիրակիի նախապատմությունը հետեւյալն է. Ադամը, որ տվյալ դեպքում խորհրդանշում է ողջ մարդկությանը, ունկնդիր լինելով սատանայի խաբեբայական խոսքերին, պատվիրազանց գտնվելով, համտեսեց արգելված պտուղը: Որպես պատիժ՝ մարդն, իհարկե, անմիջապես չմահացավ, սակայն զրկվեց Աստծո կողմից շնորհված անմահությունից եւ անիծվեց: Այսուհետ, մարդն իր քրտինքով պետք է վաստակի օրվա հացը, եւ կինը պետք է ցավով ու տառապանքով զավակ ունենա եւ վերջում էլ ասվեց նրան՝ «...հող էիր եւ հող կդառնաս» (Ծնն. 3:19):

Մեծ Պահքը տեւում է 48 օր՝ Բուն Բարեկենդանից մինչեւ Սուրբ Հարության տոն (Զատիկ):

Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք:

Հաց

Պահքի ընթացքում ի՞նչ տեսակի հաց կարող ենք ուտել: Այս հարցը Պահք պահողների շրջանում հաճախ է առաջ գալիս: Հացը ցանկացած դեպքում թույլատրելի է, սակայն պետք է հաշվի առնել դրա բաղադրությունը: Եթե այն պատրաստելիս կիրառվել են կենդանական ծագման հավելումներ, ապա հացը Պահքի ընթացքում կիրառելի չէ: Ինչ վերաբերում է խմորիչներին՝ դրանք բուսական ծագման են եւ չեն խախտում պահեցողության ընթացքը:

Մի՛շտ հիշե՛ք. Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլեւ մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից եւ այլ մեղքերից: Կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու՝ անիմաստ ու անօգուտ է, որովհետեւ «սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում եւ չի հոգնում» (Սուրբ Գրիգոր Տաթեւացի):

Մի՛շտ հիշե՛ք. Պահք պահում ենք մենք մեզ համար, մեր մեղքերից, վատ սովորություններից ազատվելու համար, այլ ոչ ցուցադրության համար: Մատթեոս 6:16-18-ում գրված է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երեւան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երեւալը եւ նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի քո գլուխը եւ լվա քո երեսը, որպեսզի չերեւաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը, գաղտնաբար, եւ քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԲԱՊԵՆ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ

Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր Մադրիդի «Ռեալը» ներկայացրել է հայտացուցակը պորտուգալական «Բենֆիկայի» դեմ պատասխան հանդիպմանը Չեմպիոնների լիգայի անցումային փլեյ-օֆֆում:

Ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեն հայտացուցակ չի ընդգրկվել եւ բաց կթողնի խաղը: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ «Բենֆիկայի» դեմ նախախաղային մարզմանը 27-ամյա ֆուտբոլիստը ձախ ծնկի վնասվածք է ստացել, որի պատճառով մարզումն անավարտ է թողել:

«Ռեալ»-ի կազմը.

Դարպասապահներ՝ Կուրտուա, Լունին, Ֆրան Գոնսալես:

Պաշտպաններ՝ Կարվախալ, Ալաբա, Տրենդ, Ասենսիո, Կարերասը, Ֆրան Գարսիա, Ռյուդիգեր, Ֆերլան Մենդի:

Կիսապաշտպաններ՝ Կամավինգա, Վալվերդե, Տչուամենի, Կեստերո, Գյուլեր, Մանուել Անգել, Պալացիոս, Տիագո:

Հարձակվողներ՝ Վինիսիուս Ժունիոր, Գոնսալո Տորես, Բրաիմ, Մաստանտուոնո:

Գլխավոր մարզիչ՝ Ալվարո Ալբերա:

Չեմպիոնների լիգայի անցումային փլեյ-օֆֆի «Ռեալ» - «Բենֆիկա» պատասխան հանդիպումը տեղի կունենա փետրվարի 25-ին Մադրիդի «Սանտյագո Բերնաբեու» մարզադաշտում եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով կեսգիշերին:

«ԱՐԱՐԱՏ»-Ի ՆՈՐԵԿՆԵՐԸ

Երեւանի «Արարատ»-ին են միացել երիտասարդ նիգերիացի ֆուտբոլիստներ Չիմերիե Ուկադիկեն, Օկեչուկվու Չուկվուն եւ Փրինս Օբինան: Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը: Չիմերիե Ուկադիկեն ձախ պաշտպան է: Նա «Արարատ»-ում հանդես կգա 32 համարի մարզաշապիկով: Օկեչուկվու Չուկվուն հանդես է գալիս կենտրոնական կիսապաշտպանի դիրքում: Կխաղա 6 համարով: Փրինս Օբինան եզրային կիսապաշտպան է եւ կխաղա 14 համարի մարզաշապիկով: Ֆուտբոլիստներն «Արարատ» են տեղափոխվել նիգերիական «Գոլդեն Բութ» ակումբից:

«ԻՆՏԵՐ»-Ը ԴՈՒՐՍ ՄՆԱՑ

Միլանի «Ինտեր»-ը դուրս մնաց ֆուտբոլի Չեմպիոնների լիգայից: Չեմպիոնների լիգայի անցումային փլեյ-օֆֆի պատասխան խաղում «Ինտեր»-ը մրցեց նորվեգական «Բուդյո-Գլիմտ»-ի հետ ու զիջեց 1:2 հաշվով: «Ինտեր»-ի կազմում միակ գնդակը խփեց Ալեսանդրո Բաստոնին, իսկ մրցակցի կազմում աչքի ընկան Իենս Պետեր Հոյգեն ու Հոկոն Էվիեն: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի պահեստայինների շարքում էր եւ այդպես էլ դուրս չեկավ խաղադաշտ:

Թիմերի առաջին խաղում եւս հաղթել էր «Բուդյո-Գլիմտ»-ը՝ 3-1 հաշվով:

ԼՈՒՐԵՐ

ՋԵՅՄՍ ԲՈՆԴԻ ՄԱՍԻՆ ՖԻԼՄԸ

Daily Mail-ի փոխանցմամբ՝ Ջեյմս Բոնդի մասին նոր ֆիլմի նկարահանումները, ըստ լուրերի, կսկսվեն այս տարվա վերջին, եւ ներքին աղբյուրները պնդում են, որ լեգենդար 007-ի մասին նոր ֆիլմի մասին շուտով կհայտարարվի:

Երկրպագուները ակտիվորեն ենթադրություններ են անում այն մասին, թե ով կհագնի սպանության լիցենզիա ունեցող գործակալի պաշտամունքային կոստյումը: Ներկայումս 28-ամյա Ջեյքոբ Էլորդին բուքմեյքերների ֆավորիտն է:

«Փոթորկոտ բարձունքներ» ֆիլմի աստղ Ջեյքոբ Էլորդին վերջին շաբաթներին կայուն կերպով ամրապնդել է իր դիրքերը հաջորդ Բոնդի դերը խաղալու մրցավազքում: Նախկինում բուքմեյքերները նրա գործակիցը սահմանում էին 14/1, սակայն «Փոթորկոտ բարձունքներ»-ի հաջող թողարկումից հետո նրա գործակիցները կտրուկ աճել են մինչեւ 5/4՝ գերազանցելով նախկին ֆավորիտ Քալում Թըրներին:

Այս դերի համար այլ հավակնորդների թվում են Աարոն Թեյլոր-Ջոնսոնը, Թեո Ջեյմսը, Էնթոնի Բոյլը եւ Հարիս Դիքինսոնը:

25 ֆիլմից, վեց 007 դերասաններից եւ աշխարհի գերիշխանության անթիվ փորձերից հետո, երկարամյա ֆրանշիզային պրոդյուսերներ Բարբարա Բրոկկոլին եւ Մայքլ Ք. Ուիլսոնը անցյալ տարվա փետրվարին վաճառեցին հայտնի լրտեսական սերիալը Amazon MGM-ին՝ ռեկորդային 1 միլիարդ ֆունտ ստեռլինգով: Ներքին աղբյուրների տվյալներով՝ հաջորդ ֆիլմի նկարահանումները նախատեսված են այս տարվա աշնան վերջին կամ ձմռան սկզբին:

ՎԱՇԻ ԵՎ ՕՐԻԳԱՄԻԻ ԱՐՎԵՍՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երբեմն պատմությունը պահպանվում է ոչ թե քարի կամ բրոնզի, այլ բարակ թղթի վրա, որը գոյատեւում է դարերի ընթացքում եւ շարունակում է կրել մարդկային ձեռքերի հետքերը: Ճապոնիայում դեռեւս պահպանվում է 702 թվականի փաստաթուղթը՝ ձեռագործ թերթ, որը գոյատեւել է տասներեք դար եւ մնացել է անվնաս:

Այս ավանդույթը կարելի է զգալ նաեւ այսօր Երեւանում. փետրվարի 24-ից մարտի 6-ը Հենրիխ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը հյուրընկալում է Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան կողմից կազմակերպված ցուցահանդես՝ նվիրված վաշի պատրաստման արվեստին եւ օրիգամիի հին պրակտիկային, որը բացահայտում է նյութի նկատմամբ հարգանքի, համբերատարության եւ ճշգրտության փիլիսոփայությունը:

Վաշը մի ժամանակ օգտագործվել է գրքերի եւ կարեւոր փաստաթղթերի համար, ճապոնական տներում՝ միջնապատերի եւ դռների համար, ինչպես նաեւ նկարչության եւ դեկորատիվ արվեստում: Այսօր այն կարելի է գտնել նաեւ ժամանակակից դիզայնում, նորաձեւության մեջ եւ ինտերիերներում: Ավելին, այն էկոլոգիապես մաքուր է, քանի որ պատրաստված է բնական նյութերից:

Հետաքրքիր է, որ վաշը նաեւ օգնում է պահպանել հայկական ժառանգությունը: 2001 թվականին Ճապոնիան ձեռագրերի վերականգնման սարքավորումներ է նվիրաբերել Մատենադարանի հին ձեռագրերի ինստիտուտին: Ճապոնական թուղթը օգտագործվում է հին ձեռագրերի վերականգնման, վնասված էջերի ամրացման եւ դրանց կյանքը երկարացնելու համար: Այսպիսով, մեկ ավանդույթը նպաստում է մյուսին:

Հայ նկարիչներն ու մանկավարժները, որոնք զարգացնում են օրիգամիի արվեստը Հայաստանում, մասնակցել են ցուցահանդեսի կազմակերպմանը եւ բացմանը: Նրանց թվում էին Հենրիխ Իգիթյանի անվան ազգային գեղագիտության կենտրոնի ուսուցչուհի եւ «Հիկարի» կենտրոնի նախագահ Կարինե Փիլիպոսյանը, այս տեխնիկան կիրառող Արթուր Կարապետյանը, օրիգամիի մասին դասավանդող Արմինե Ազիզբեկյանը, ինչպես նաեւ թղթի ծալման արվեստն օգտագործող Ջեմֆիրա Եգանյանը եւ Շուշանիկ Ալեքսանյանը, որոնց աշխատանքներից բացի, ցուցահանդեսում ներկայացված են նաեւ մանկական թեմատիկ հավաքածուներ, ինչպիսիք են «Թիթեռներ եւ ձկներ»-ը, ինչպես նաեւ «Հիկարի» հայ-ճապոնական գիտակրթական եւ մշակութային կենտրոնի ուսանողների աշխատանքները՝ կենդանիների, ծաղիկների եւ ավելի բարդ կոմպոզիցիաների պատկերներով, որոնք նվիրված են ճապոնական պատմությանն ու մշակույթին:

● *Փետրվարի 27-ին՝ ժամը 19:30-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Իմ կնոջ ամուսինը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ եթե ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, արդյոք եկամտային հարկի պարտավորություն առաջանում է, թե ոչ:

Կառլեն Սիրադեղյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված կրթաթոշակները, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

ՀՀ պետական
եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այսինքն՝ ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ընդգրկվել որակավորված ներքին աուդիտորների ցանկում:

Անդրանիկ Ստեփանյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն անձինք, որոնք ունեն Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի միջազգայնորեն ճանաչված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորումը (Certified Internal Audit- CIA) կամ հանրային հատվածի աուդիտորի որակավորումը (Certified Government Auditing Professional - CGAP Professional - CGAP),

2) որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից անցկացված առնվազն բազային (ֆունդամենտալ) 9 քննության (F1-F9) արդյունքում տրված հաշվապահ-աուդիտորի որակավորումը,

3) հանրային ֆինանսների եւ հաշվապահության արտոնագրված ինստիտուտի (Chartered Institute of Public Finance Accountancy: CIPFA) կողմից տրված որակավորումը,

4) որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի (American Institute of Certified Public Accountants) կողմից տրված հանրային հաշվապահի որակավորումը (CPA):

Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ կառույցների կողմից տրված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորումը,

2) Հայաստանի Հանրապետության հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից տրված աուդիտորի որակավորումը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ դիմումին կից պետք է ներկայացնել՝ 1. անձնագրի պատճենը, 2. համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը, հայտարարություն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը armenpress-ից

Սիմոն Աբգարյանի «Պենելոպե, օ՜, Պենելոպե» ներկայացման պրեմիերան Համազգային թատրոնում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 2 - 6 - 3 + 1
	Կոտայքի լեռներ	- 1 - 5 - 2 + 1
	Կոտայքի նախալեռներ	- 1 + 2 + 1 + 4
	Գեղարքունիք	- 1 - 5 - 2 + 1
	Լոռի	0 - 4 - 3 + 1
	Տավուշ	0 - 3 - 2 + 1
	Արագածոտնի լեռներ	- 1 - 5 0 - 3
	Արագածոտնի նախալեռներ	- 2 + 2 + 1 + 4

	Արարատ	0 + 3 + 2 + 4
	Արմավիր	0 + 3 + 3 + 5
	Վայոց ձորի լեռներ	- 2 - 5 - 3 + 1
	Վայոց ձորի նախալեռներ	0 + 3 + 2 + 5
	Սյունիքի լեռներ	- 2 - 5 0 - 3
	Սյունիքի նախալեռներ	0 - 4 - 2 + 1
	Սյունիքի հովիտներ	+ 1 + 4 + 2 + 6
	Երեւան	+ 1 + 3 + 3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*